ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 05 մարտի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 10-Ա/Ք

**ԳԱՌՆԻԿ ՍԵՐՈԲԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 12-րդ կետերը և հաշվի առնելով Հայ-ռուսական համալսարանի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Սերոբի Ասատրյանի՝ արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումներն ու ակնառու նվաճումները, օտարերկրյա պետությունների հետ համագործակցության զարգացմանը նպաստող գործունեությունը, գիտակրթական համագործակցության, բարեկամական կապերի ամրապնդման և զարգացման գործում ունեցած նշանակալի ծառայությունները, ինչպես նաև՝ գիտական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ ավանդը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Սերոբի Ասատրյանին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի Ոսկե մեդալ:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ